ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ժանաչելու մասին» թիվ 1918 որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով՝ նախատեսվում է ՀՀ յունիքի մարզի Սիսիան համայնքի Աշոտավան բնակավայրում իրականացնել 800 կվտ հզորությամբ ՀԷԿ-ի կառուցման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԷԿ-ի կառուցումը համայնքում կապահովվի շուրջ 500 միլիոն ՀՀ դրամի նախատեսվող ներդրումներ, կստեղծվի թվով 5-6 հիմնական աշխատատեղ,համայնքում կիրականացվի ամենամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, ուստի ՀԷԿ-ի կառուցման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Աշոտավան բնակավայրում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության պատմական և մշակույթային հողեր գործառնական նշանակության 0.06հա (Ծածկ.՝ 09-015-0109-0001) հողամասը, համաձայն հերթապահ էլեկտրոնային քարտեզի, փոխադրել էներգետիկայի,տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտներ նպատակային նշանակության էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
բաժնի առաջատար մասնագետ՝ Վ.Խաչատրյան

14.07.2023թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
բաժնի առաջատար մասնագետ՝ Վ.Խաչատրյան
14.07.2023թ